20531

373
4-47

12115

13

010

2002

5(91.542):378
Գ-47

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

ԾՐԱԳԻՐ
ԵՒ
ԿԱՆՈՆՆԵՐ։

ՌՅԽԳ։—1895 Թ։
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։
Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

10638

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

373
Գ-47
4
1006

ԾՐԱԳԻՐ

այն առարկաների, որոնցից քննուելու են Մայր Աթոռի Գէորգեան ճեմարանի երրորդ դասարանը մրցանել ցանկացող աշակերտները։

---

1. ԿՐՕՆ

Ա. Սրբազան պատմութիւն Հին Կտակարանի։ — Աշխարհի և մարդու ստեղծագործութիւնը։ Առաջին մարդոց պատուիրանազանցութիւնը։ Զրհեղեղ և Բաբելոնի աշտարակաշինութիւնը։ Նահապետների՝ Աբրահամի, Իսահակի, Յակոբի և նորա որդւոց կեանքը։ Իսրայէլի որդիները Եգիպտոսում։ Մովսէս. Եգիպտոսից դուրս գալը և անապատում վարած կեանքը։ Սինայի օրէնսատուութիւնը։ Յեսու. աւետեաց երկիր մտնելն ու նուաճելը։ (Արդար Յոբը)։ Դեբովրա և Բարակ. Գեդէոն. Սամիսոն։ Հռութ։ Հեղի և Սամուէլ։ Առաջին թագաւորները՝ Սաւուղ, Դաւիթ և Սողոմոն. տաճարի շինութիւնը։ Թագաւորութեանց բաժանումը։ Եղիա և Եղիսէ մարգարէներ։ Իսրայէլի թագաւո-

Անվան
6632-52

րութեան անկումը և Եսայի մարգարէ։ Յուդայի թագաւորութեան անկումը և Երեմիա մարգարէ։ Բաբելոնի գերութիւնը և Եզեկիէլ մարգարէ. Դանիէլ և Յովնան մարգարէներ։ Բաբելոնի գերութիւնից դառնալը և տաճարի վերաշինութիւնը։ Սամարացիք։ Եզր և Նեեմի։ Մակաբայեցիք։

Բ. *Սրբազան պատմութիւն Նոր Կտակարանի։*— Յովհաննէս Մկրտչի ծնունդը և քարոզութիւնը։ Փրկչի ծնունդը և Մկրտութիւնը։ Անապատում փորձուիլը։ Առաջին առաքեալների ընտրութիւնը։ Գալիլիայում քարոզելն ու գործած հրաշքները. Լերան քարոզը և առ հասարակ Քրիստոսի վարդապետութեան հիմնական կէտերը. մասնաւորապէս բարոյական սկզբունքները։ Աւետարանի բոլոր առակները։ Գլխաւոր բժշկութիւններն ու հրաշքները։ Շաբաթի և փարիսեցիական օրինապահութեան մասին տեղի ունեցած վէճերը և դոցա առթիւ Փրկչի քարոզած սկզբունքները։ Առաքեալներին քարոզութեան ուղարկելը և նոցա տուած պատուէրները։ Փրկչի խօսակցութիւնը Նիկոդիմոսի և Սամարացի կնոջ հետ։ Հրէից նորա դէմ ցոյց տուած հակառակութիւնները։ Ղազարոսի յարութիւնը։ Հանդիսաւոր մուտքը Երուսաղէմ։ Վերջին շաբաթուայ քարոզութիւնները և վերջին դատաստանի մասին արած գուշակութիւնները։ Խորհրդաւոր ընթրիք։ Մատնութիւն. չարչարանք. խաչելութիւն և մահ. յարութիւն և համբարձումն։ Հոգեգալուստ։ Առաջին

հաւատացեալների կեանքը. Սաեփաննոս. Պետրոս, Յովհաննէս և Յակոբոս առաքեալները։ Պօղոսի դարձը և գործունէութիւնը։

Իրև դասագիրք ի նկատի պէտք է ունենալ Սահակ քահանայի՝ Սրբազան Պատմութիւն Հին և Նոր ուխտի (ամբողջ) և պակաս մասերը լրացնել Ս. Գրքից կամ ուրիշ մատչելի դասագրքերից։

Բերանացի պէտք է իմանալ անպատճառ Հին Կտակարանից՝ 10 պատուիրանները և Նորից՝ ինքն երանութիւնները։ Կրպահանջուի նաև Յակոբի օրհնութիւնից Յուդայի մասը. Ծնն. Խթ. 9—12։ Յովսէփի և Նաթանի առակները՝ Դատ. Թ. 8—15 և Բ. Թագ. ԺԲ. 1—4. (գոնէ բովանդակութիւնը և իմաստը)։ Ա. Իբ. Իզ. ԼԸ. 1—7. Խ. 1—5. Ծ. Հ. 1—12. 59. ՃԻԲ. ՃԼԲ. ՃԼԶ 1—6. Սաղմոսները։ Եսայի մարգարէից՝ այգու առակը. Ե. 1—7. Մարգարէի կոչումը. Գլ. Զ. Տիրոջ նահատակը՝ Եսայի ԾԳ. Նոր Կտակարանի մէջ մեծացուցէն. հատուածներ լերան քարոզից և Յովհաննու աւետարանի ԺԴ, ԺԵ և ԺԶ գլուխներից։

Գ. *Համառօտ պատմութիւն Հայաստանեայց Սեկեղեցւոյ։* — Թադէոս և Բարդուղիմէոս՝ Հայոց առաջին լուսաւորիչները։ Ս. Գրիգոր լուսաւորիչ և իւր յաջորդները։ Մեծն Ներսէս։ Ս. Սահակ և Ս. Մեսրոբ. նոցա աշակերտներից գլխաւորները։ Ս. Վարդանանք և Ղևոնդեանք։ Յովհան Մանդա-

կունի։ Մովսէս Եղուարդեցի և Վյաց բաժանումը։ Սահակ Զորափորեցի և Յովհան Օձնեցի։ Ս. Ներսէս Շնորհալի։ Կաթուղիկոսական աթոռի փոխադրութիւնը Ս. Էջմիածին։ Մովսէս Սիւնեցի։ Փիլիպպոս և Սիմէօն կաթուղիկոսներ։ Ներսէս Աշտարակեցի և Գէորգ կաթուղիկոս։ Ծանօթութիւն Երուսաղէմի և Կոստանդնուպօլսի Պատրիարքութեանց և Սսի ու Աղթամարի կաթուղիկոսութեանց։ Հայոց գլխաւոր վանքերը։ Հայ եկեղեցւոյ արդի վարչական կազմակերպութիւնը։

Դ. Հաւատոյ հանգանակը՝ բերանացի և թարգմանաբար։ Հասկացողութիւն հաւատոյ էական կէտերի և մեր եկեղեցւոյ օտարներից ունեցած գլխաւոր տարբերութիւնների մասին։ Տարուայ գլխաւոր աօների, եկեղեցական խորհուրդների, ծէսերի և կարգերի պարզ բացատրութիւն։ «Խորհուրդ մեծ»։ «Այսօր կանգնեցաւ» «Պարգևատուն»։ «Այսօր յարեաւ ի մեռելոց»։ «Էջմիածինն ի հօրէ»։ «Նորահրաշ»։ «Անձինք նուիրեալք» (Ա. Թ. Ի. Լ. տները) շարականները (բերանացի)։ Ժամակարգութեան և պատարագի գլխաւոր աղօթքները, մաղթանքները և երգերը։

---

2. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ.

Ա. Տարերք ձայնագրութեան.

1. Ձայնանիշներ. եօթնեակ.
2. Ութնեակ (ութնեակների կազմութիւնը).

3. Տևողական նշաններ.
4. Կիսաձայներ.
5. Երաժշտական ձայների զօրութիւնը.
6. Ընդհարումներ։

Բ. Եկեղեցական երգեցողութիւն.

1. Եկեղեցական ութն Ձայն եղանակներ — միջակ, յոփաւոր և պարզ ծանրները. (կանոն, երգել և ձայնագրել)։
2. Սուրբ Պատարագի Արարողութիւն (բացի մեղեդիներից, Սրբասացութիւններից, Տպերից և Դանձերից)։

ԴԱՍԱԳԻՐՔ.

1. Նիկողայոս Թաշճեանցի (կանոնագիրք).
2. Բրդեան Արշակի (միայն ութն Ձայնի կանոնն ու օրինակները)։

---

3. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ.

Ա. ԱՇԽԱՐՀԱԲԱՌ.

1. Դասագիրք. Ընտիր հատուածներ — Յով. Նազարեանի.

կամ 2. Ն. Տէր Ղևոնդեանի Մայրենի լեզու չորրորդ տարի։

3. Քերականութիւն աշխարհաբառ — Ս. Պալասանեանի։

Ընթերցանութիւն.

Պահանջուում է անսայթաք և գեղեցիկ ա-

ուղղանութեամբ կարգալ։ Կարգացածը մասնաբաժանել բովանդակութեան համեմատ։ Ցոյց տալ գլխաւոր մասերի բովանդակութիւնը, պատմելով կանոնաւոր գրականական բարբառով։

Անգիր արտասանել կանոնաւոր առուգանութեամբ

1. Արաքսի արտասուքը
2. Եղիշէ
3. Տիրամայր
4. Քահանայ

Գամառ - Քաթիպայ

5. Ո՞հ իՙնչ անուշ
6. Թաղումն քաջարդեան

Պէշիկթաշլեան Մ.

7. Պլպուլն Աւարայրի
8. Հայոց աշխարհիկ

Ալիշան

9. Պանդուխտ վասպուրականցին իւր ընկերոջը։
10. Ժայռ — Յովհաննիսեան։

Գրաւոր.

ա. Փոխադրութիւն ոտանաւորից արձակ.
բ. Շարադրութիւն անգիր ուսած նիւթերից։

Քերականութիւն.

Իմանալ արևելեան աշխարհաբառի քերականութիւնը լրիւ ըստ Պալասանեանի, իսկ արևմտեան աշխարհաբառի քերականութիւնից իմանալ առաջերի տարբեր հնչիւնները և կանոնաւոր հոլովումն ու խոնարհումը։

Գրութիւն.

Ուղղագրական կանոններ ըստ Պալասանեանի,

մաքուր և կանոնաւոր գրութիւն և անսխալ թելագրութիւն։

Բայեր խոնարհումն. Ձևերի կազմութիւնը. — Բաղադրիչներ. — Սոցանից կազմուած ժամանակները և նոցա վերջաւորութիւնը։ Բացառութիւններ. — Անկանոն, պակասաւոր և աւելի բայեր։

3. Նախդիրներ. — զ. ի (յ). ց. առ. ընդ. ըստ. — սոցա գործածութիւնը։

Գրութիւն.

Ուղղագրական կանոններ, թելագրութիւն գրաբառ, կէտադրութիւնը. տողադարձի կանոն։

Աշակերտը պիտի կարդացած լինի հետևեալ գրքերից գոնէ չորսը.

1. Անահիտ
2. Արեգնազան

Ազայեան Ղ.

3. Ծովինար
4. Շէն թագաւորի աղջիկը

Քամալեան Ս.

5. Սասունցի Դաւիթը, փոխադրութիւն ճաղարբէկեանց.

6. Կռուածարիկ
7. Սօս և Վարդիթեր

Պ. Պռոշեան,

8. Սամուէլ
9. Դաւիթ Բէկ

Բաֆֆի

10. Վէրք Հայաստանի — Խ. Աբովեան.
11. Երկունք Թ. դարու. Ծերենց.
12. Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը. Գամառ Քաթիպա.

Բ. ԳՐԱԲԱՌ.

ԴԱՍԱԴԻՐՔ.

1. Ծաղկաքաղ՝ երկրորդ շրջանից. Կոստանեանի.
2. Գրաբառի Հոլովումն Նոյն.
3. Գրաբառի խոնարհումն Նոյն.
4. Նոյնը Ա. Մալխասեանի.
5. Քերականական լուծումն. Ս. Մանդինեանի։

Ընթերցանութիւն.

1. Կարդալ և թարգմանել գրաբառից աշխարհաբառ.
2. Կարգալ ու բովանդակութիւնը մանրամասն պատմել աշխարհաբառ.

Անգիր արտասանել ծաղկաքաղի Ա. շրջանից.

1. Եղանակ.
2. Զմեռ.
3. Գարուն.
4. Հայրենիք.
5. Առ Սոխակն.
6. Օրհնեցէք մանկունք զՏէր.

Ծաղկաքաղի երկրորդ շրջանից.

Բ. Ընդ կործանումն Հայկազեան գահու.
Զ. Արտաշէս Բ. տօմարագիր.
ԺԳ. Հոկտեմբեր.
ԺԲ. Զգարուն և զամառն դու ստեղծել.
ԻԵ. Ողբ Եղիսեայ։

Գրաւոր.

1. Զափածոյ գրուածքը արձակի վերածել գրաբառ.
2. Թարգմանել աշխարհաբառից գրաբառ պարզ հատուածներ։
3. Գրել մի համառօտ պարզ պատմութիւն գրաբառ.
4. Քերականական վերլուծութիւն։

Քերականութիւն.

Ա. Վերլուծութիւն պարզ նախադասութեանց.

Բ. Ճանաչել և սահմանել բոլոր մասն բանիները.

Գ. Սաուգաբանութիւն. Անուններ. Հոլովում։ Եզակի սեռականի և յոգնակի ուղղականի և սեռականի կազմութեան կանոնները. յօդիչները.— Բառի ներքին փոփոխութիւնը.— Ածանցեալ հոլովներ.— Սոցա կազմութիւնը։ Ուղ. և սեռական ածանցիչներ։— Արտուղի հոլովումներ։ Առանձնական հոլովումներ. բարդ և ածանցեալ բառեր։— Անհոլովելի բառեր։—

---

4. ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ.

Ա. Ընթերցանութիւն։

Ազատ և կանոնաւոր ընթերցանութիւն արձակ և չափածոյ գրուածքների, ուշիզ շեշտադրութեամբ և մաքուր առոգանութեամբ։

Դասագիրք. «Л. Поливановъ—Русская христоматія» առաջին մասն, միջնակարգ ուսումնարանների առաջին երկու դասարանների համար։

Գ. դասարան մտնող աշակերտներն այնքան պատրաստութիւն պիտի ունենան, որ այդ դասագրքի արձակ և չափաբերական հատուածներից գլխ գիւրիններր կարողանան հասկանալ, թարգմանել ռուսերէնից հայերէն եւ պատմել ռուսերէն նոցա բովանդակութիւնը։

Անգիր արտասանել.

1. Пушкинъ.—Беззаботность птички.
2. „ —Птичка (Въ чужбинѣ свято соблюдаю . . .)
3. Лермонтовъ.—Казачья колыбельная пѣсня.
4. „ —Два великана.
5. Крыловъ — Стрекоза и Муравей.
6. „ — Лягушка и Волъ.
7. „ — Прохожіе и Собаки.
8. „ — Слонъ и Моська.
9. Кольцовъ.—Что ты спишь, мужичокъ ?
10. Полонскій.—Солнце и мѣсяцъ.

Բ. Քերականութիւն.

Ձեռնարկ. А. Преображенскій.—Краткая русская грамматика. ч. I. Этимологія.

Понятіе о рѣчи и предложеніи. Главные и второстепенные члены продложенія. Разборъ простого предложенія.

Понятіе о частяхъ рѣчи. Составъ и образованіе словъ.

Раздѣленіе звуковъ: гласные, согласные и полугласные. Двоякое начертаніе звуковъ. Раздѣленія гласныхъ: твердые и мягкіе. Раздѣленіе согласныхъ (по органу произношенія).

Важнѣйшія измѣненія гласныхъ и согласныхъ звуковъ (§§ 18, 19, 20, 21). Соединеніе согласныхъ съ гласными.

Слогъ и удареніе.

Имя существительное (§§ 28, 29, 30, 31, 36, 37). Склоненіе именъ существительныхъ (1-е, 2-е, 3-е, 4-е, 5-е,) Имена сущ., употребляемыя только во множеств. числѣ. Правописаніе склоненій.

Имя прилагательное (§§ 48, 49). Склоненіе именъ прилагательныхъ (§§ 54, 55). Степени сривненія (§§ 56, 57). Правописаніе прилагательныхъ.

Имя числительное (§§ 59, 61). Правописаніе числительныхъ.

Мѣстоименіе. Провописаніе мѣстоименій.

Глаголъ (§§ 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 81, 82, 83, 84, 85, 86). Правописаніе глаголовъ.

Понятіе о нарѣчіи (§ 94). Провописаніе нарѣчій.

Понятіе о предлогѣ. Правописаніе предлоговъ.

Понятіе о союзѣ. Правописаніе союзовъ.

Междометіе.

Գ. Գրաւոր.

Մաքուր և անսխալ գրել, իմանալ այն բոլոր ուղղագրական կանոնները, որ յիշատակուած են քերականութեան մէջ։ Նմանապէս իմանալ կէտադրութեան և տողադարձի գլխաւոր կանոնները. օրինակ՝ бл, вл, пл, фл, мл, жд մնումեն սովորաբար անբաժան — гра — бли, тра — вля, ду — шо, зе — мля և այլն. ուշ դարձնել մանաւանդ այնպիսի յաճախ պատահող վերջաւորութեանց ուղղագրութեան վրայ, որպիսի են, օրի-

նակ՝ енька և ечка (և ոչ инька, ичка) - маменька, Манечка, կամ енькій (և ոչ инькій(, маленькій, худенькій և ն։

5· ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

Զորս գործողութիւնք վերացական և անուանական ամբողջ թուերով։

Չափերի աղիւսակը (ռուսական և ֆրանսիական)· խնդիրներ քառակուսի և խորանարդ չափերով։

Թուերի բաժանականութիւն· պարզ և բարդ թուեր՝ բազմապատիկ թիւ՝ անմնացորդ բաժանման նշանացոյցերը։

Անմնացորդ բաժանման նշանացոյցերը — 2՝ 3՝ 4՝ 5՝ 6՝ 8՝ 9՝ 10։

Թուերի լուծելը պարզ բազմապատիչների կամ բաժանարարներ· գտնել երկու կամ մի քանի թուերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը և ամենափոքր բազմապատիկ թիւը։

Կոտորակ։ Զորս գործողութիւն վերացական և անուանական հասարակ կոտորակներով՝ գործողութեանց բացատրութեամբ հանդերձ։ Գտնել որևէ թուի մի քանի մասերը և յայտնի մասերից ամբողջը։

Զորս գործողութիւն վերացական անուանական տասնորդական կոտորակներով։

Հասարակ կոտորակների տասնորդական դարձնելը՝ վերջաւորուած և պարբերական կոտորակներ· պարզ և խառն պարբերական կոտորակներ։

Տասնորդական կոտորակները հասարակ կոտորակների դարձնել։

Յ·բաբերութիւնք և համեմատութիւնք։

Այս բոլոր կանոնների վերաբերեալ խնդիրների գրաւոր և բանաւոր լուծումն։

Դասագիրք—1· Կանոնագիրք՝ Գր· Վարձելեանի·
2· Խնդիրների ժողովածու՝ նոյն հեղինակի
3· « » Ա· Սիմէօնեանցի·
4· « » Յ· Դէորգբէգեանի և Մ· Պանճուլազեանի։

6 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ·

Ա·

Հորիզոն· երկրի կողմերը· երկրի ձևը· երկրի շարժումը իւր առանցքի և արևի շուրջը· դորանից առաջացած երևոյթները՝ ցերեկ՝ գիշեր և տարուայ եղանակներ։ Երկրագնտի առանցքը և բևեռները։

Ցանօթութիւն երկրագնտի և քարտէսի· զուգահեռական գծեր՝ հասարակած· արևադարձներ· բևեռային շրջաններ· միջօրէականներ· առաջին միջօրէական։ Տեղերի որոշումն ըստ լայնութեան և երկայնութեան աստիճանների։ Կիսագնտեր և գօտիներ։

Ջուր և ցամաք· ովկիանոս՝ ծով՝ ծոց՝ խորշ՝ նեղուց։ Մայր ցամաք և կղզի՝ թերակղզի՝ հրուանդան՝ պարանոց։ Հարթութիւններ և լեռներ։

Ցամաքի ջրեր· աղբիւր· գետ (ակունք՝ բե-

բան, վտակ կամ ճիւղ, աջ և ձախ ափ, տաշտ) լիճ։

Օդ. հողմեր, մառախուղ, ամպ, անձրև, ձիւն, կարկուտ, ցօղ, եղեամն։

Կիմայ, բոյսեր և կենդանիներ։

Մարդ և մարդկային ցեղեր։

Բ.

Աշխարհի հինգ մասերը, գլխաւոր թերակղզիները, պարանոցները և կղզիները. հրուանդանները։ Լեռներ, հրաբուղխներ, հարթութիւններ. գետերը, լճերը։ Ովկիանոսները, ծովերը, ծոցերը, նեղուցները։

Դասագիրք՝ Ն. Սիմէօնեանցի։

---

7. ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Ա. ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Քարայ, հատաքար, աւազաքար, աւազ. սապակի. կաւ, կաւէ անօթներ. կրաքար, կաւիճ, քարածուխ. երկաթ, պղինձ, ոսկի, արծաթ, անգիկ։ Հանքերի ու մետաղների ֆիզիքական յատկութիւններն ու գործադրութիւնը կեանքի մէջ։ Հողի տեսակները։

Բ. ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Բոյսի աճեցման գործարաններ — արմատ, ցօղունն կամ բունն, սոցա գլխաւոր տեսակները. տերև, սորա մասերը և գլխաւոր տեսակները. տերևների դասաւորութիւնը ցօղունի վերայ։ Պտուկներ. ծաղիկ, սորա մասերը և գլխաւոր ձևերն.

այդ մասերի ծաղկափթթութեան տեսակներ. պտուղ, սորա տեսակները. սերմ և իւր մասերը. ընդհանուր տեղեկութիւն սպօրաբոյսերի մասին։ Ծանօթութիւն հետևեալ ընտանիքների. — շուշաններ, թիթեռնածաղիկներ, մոլոշներ, խաչածաղիկներ, շրթնածաղիկներ, բազմածաղիկներ, խնձորենիներ, նշենիներ, վարդենիներ, հացաբոյսերի։

Գ. ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Կաթնասուններ.

Գիշակերներ. կատու, շուն, գայլ, առիւծ, վագր, աղուէս, արջ։ Կճղակաքաշխ. — միասմբակ — ձի, էշ. երկակճղակ — կով, ոչխար, այծ, եղջերու, ուղտ. բազմակճղակ — խոզ, փիղ. կրծողներ — մուկ, նապաստակ, թեւտներ — ղղջիկ. կէտաձեւներ — կէտ։

Թռչուններ.

Հաւեր. աքաղաղ և հաւ. ճանճայիններ — արագիլ. գեշակերներ — արծիւ, բու. մագլցողներ — թութակ. երգողներ — սոխակ, ծիծեռնակ. լողացողներ — սագ, բադ։

Երկակենցաղներ — գորտ։

Սողուններ — կրեայ, մողէս, օձեր։

Ձկներ — փայտանկ, գայլաձուկն, օձաձուկն, թառափ։

Միջատներ — Մայիսեան բզէզ, մեղու, մրջիւն, ճանճ, թիթեռ, շերամի որթ, մորեխ, սարդ, խեցգետին։

108

Դ. ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ.

Համառօտ ծանօթութիւն ոսկրակազմի, մարսողութեան, արիւնագարձութեան, շնչառութեան գործարանների, նեարդային համակարգութեան, արտաքին զգայարանների, կաշուի և մկանների մասին։

ԴԱՍԱԳՐՔԵՐ.

1. Զրոյցներ բնական պատմութիւնից Ս. Փիլոյեանի.
2. Բուսաբանութիւն բժ. Գր. Տէր Գրիգորեանի.
3. Բուսաբանութիւն համառօտ կրկնողական դասընթացք. Ա. Քիշմիշեանի.
4. Մարդակազմութիւն Զ. Գրիգորեանի.
5. Մարդակազմութիւն բժ. Լ. Տիգրանեանի.
6. Краткій курсъ Естественной Исторіи— Ярошевскаго.
7. Краткій курсъ Естественной Исторіи — Вараввы.
8. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԵՒ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ քննութիւն կը լինի ծխական ուսումնարաններում ուսածի չափով։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ։

1. Աշակերտների ընդունելութեան քննութիւնը լինելու է օգոստոսի 24 ից մինչև 31։

2. Ճեմարան մտնել ցանկացողները պէտք է խնդիր տան Վեհափառ Կաթուղիկոսի անունով և այն ոչ ուշ քան մինչև յուլիսի 1։

3. Խնդրագրի հետ պէտք է ներկայացնեն անշուշտ ծննդեան, մկրտութեան (Դոբրովոլ) և ծաղկի պատուաստման վկայականները։ Եթէ Ճեմարան մտնել ցանկացողը դուրս է եկած մի որ է ուսումնարանից՝ այս դէպքում խնդրի հետ պէտք է ներկայացնէ ուսման և բարի վարքի վկայական։

Ծանօթ. Առանց վկայականների մատուցած խնդիրները կը մնան անկատար։

4. Ճեմարան մտնել ցանկացող աշակերտին պէտք է քննէ Ճեմարանի բժիշկը, որը տալու է տեսչին գրաւոր տեղեկութիւն քննուողի առողջութեան մասին։

5. Դպրոցական դասարանները կընդունուին թէ վարժարաններում ուսածները և թէ մասնաւորապէս պատրաստուածները։ Իսկ Ճեմարանի առաջին լսարան կընդունուին նոքա, որոնք արժանացել են դպրանոցական վկայագրի։

6. Բոլոր դասարաններն ընդունուել կարող են կանոնաւոր հարցաքննութիւնից յետոյ։ Իսկ առաջին լսարան մտնել ցանկացողները պէտք է քննութիւն տան այն առարկաներից, որոնցից կարևոր կը համարէ մանկավարժական խորհուրդը։ (տես 17 և 18 յօդ.)։

7. Եթէ դպրանոցական ընթացքն աւարտելուց յետոյ անցած լինի մի տարուց աւելի, այն ժամանակ դպրանոցական վկայագիր ներկայացնող աշակերտը տալու է կանոնաւոր հարցաքննութիւն բոլոր առարկաներից։

8. Հարցաքննութիւնից յետոյ այն խնդրատուները կընդունուին Ճեմարանի աշակերտ, որոնց Ճեմարանի մանկավարժական խորհուրդն արժան կը համարէ։

Ծանօթ. Պէտք է ուշադրութիւն դարձնել, որ Ճեմարանի աշակերտ ընդունուածները լինեն ոչ դեռ ուշ, ոչ և երկրորդի և յաջորդ, և և բարի բնաւորութեամբ։

9. Երրորդ դասարան մտնել կարող են այն պատանիները, որոնք լրացուցել են 14 տարին և մտել են 15-ի մէջ։ Այս համեմատութեամբ և լինելու է յաջորդ դասարաններ մտնող աշակերտների հասակը։

10. Ճեմարան կընդունուին դեռ գիշերօթիկ աշակերտներ թէ ձրիավարժ և թէ թոշակաւոր։

11 Առաջիկայ տարին ձրիավարժների թիւը լինելու է ալ ---էլ քան մի հարիւր աշակերտ։

12. Իւրաքանչիւր նոր մտնող աշակերտ պարտաւոր է ներկայացնել գրաւական՝ Յայսկոյս Կովկասեան գաւառներից յիսուն ռուբլի, իսկ Ռուսաստանի հեռաւոր վիճակներից և օտար երկրներից եօթանասուն և հինգ (75) ռուբլի, որպէս զի վճարուի ճանապարհածախսը. եթէ հարկ լինի արձակել աշակերտին, նաև հանուի կորցրած, կամ փչացրած գրքերի, հանդերձեղէնի և այլ իրերի գինը։

13. Աշակերտի իսպառ արձակելու ժամանակ կը յանձնուի նորան իւր գրականը կորած կամ փչացած իրերի գինն հանելուց յետոյ։

14. Իւրաքանչիւր թոշակաւոր աշակերտ պէտք է վճարէ տարեկան երկու հարիւր ---էլ՝ կէսը սեպտեմբերին և կէսը յունուար ամսին։

15. Թոշակաւոր աշակերտներն ստանում են ամենքան ձրիավարժներին հաւասար։

16. Եթէ թոշակաւոր աշակերտը դուրս գայ կամ արձակուի ուսումնական կիսամեակը չլրացած, այդ դէպքում վճարած գումարը յետ չի տրուի նորան։

17. Ճեմարանի Գ. դասարան մտնել ցանկացողները պարտաւոր են քննութիւն տալ հետեւեալ առարկաներից. 1. Կրօն. 2. Հայոց լեզու, 3. Ռուսաց լեզու, 4. Թուաբանութիւն. 5. Բնական պատմութիւն, 6 Ընդհանուր աշխարհագրութիւն, 7. Եկեղեցական երգեցողութիւն, 8. Գծագրութիւն և 9. Գեղագրութիւն։

18. Դ. Ե. Զ. դասարան մտնել կարելի է դպրանոցների համապատասխան դասարաններից, քննուելով կրօնից և լեզուներից։ Նոքա, որոնք դպրանոցներում չեն ուսել, կը քննուին բոլոր առարկաներից։

19 Ճեմարանի Ա. լսարան մտնել ցանկացողները պարտաւոր են քննութիւն տալ հետեւեալ առարկաներից. 1. Քրիստոնէական Վարդապետութիւն. 2. Հին և Նոր կտակարանի գրքերի ծանօթութիւն ընդհանրապէս. մանրամասն ծանօթութիւն Հորից աւետարանաց և Գործոց Առաքելոց, 3. Եկեղեցական պատմութիւն Հայոց (մանրամասն ծանօթութիւն մինչև ԺԳ. դարը)։ 4 Հայոց լեզու. գրաբառի և աշխարհաբառի քերականութիւնները. գրաբառ շարադրութիւն. 5. Ռուսաց լեզու. ծանօթութիւն ընտիր հեղինակների նշանաւոր գրուածների հետ. շարադրութիւն Ռուսերէն լեզուով։ Բացի այս առարկաներից ամէն մէկը պարտաւոր է գրել մի աշխարհաբառ շարադրութիւն՝ գրականութեան և պատմութեան մէջ ունեցած հմտութիւնը ցոյց տալու համար։

Տեսուչ Ճեմարանի՝ Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ։

20531

2013